

## Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Արտաքին անցքերի ազդեցութիւնը երկրի ներքին կեանքի վրայ.—Սմա-  
տուայ ընթացքում հրատարակուած օրէնսդրական կարգադրութիւններ.—  
Մի քանի վերանորոգումների յետաձգումը.—Լուս. մինիստրի շրջաբերա-  
կանը.—Նոր բարձրագոյն դպրոցներ.—Օէալիստներին համալսարանում  
ընդունելու հարցը.—Զինուորական մինիստրի կարգադրութիւնը՝ նորակոչ-  
ներին գրագիտութիւն սովորեցնելու մասին.—Վքսորի վերացումը.—Գլխա-  
հարկի վերացումը Վովկատում.—Մայրերի և կենդրոնի խնդիրը.—Հովանա-  
ւորեալ արդիւնագործներ.—Գոյութեան կոտի էթիկան.—Սզդու միջոց՝ սանձ-  
աճարելու շահագէտներին.—Նաթագործների ժողովներում ձայնատու-  
թեան եղանակը.—Պետութեան տարբեր ցեղերը կապող զգացմունքներ.—  
Յօրեկեաններ և մահեր.—Հայոց հոգեւորականութեան վերաբերմունքը  
դէպի իր ժողովուրդը.—Նորագոյն նմուշներ կոնսիստորիական իրաւա-  
գիտութեան:

Ռուսաստանը բռնում է Եւրոպայի  $\frac{2}{3}$  և Ասիայի  $\frac{1}{3}$  մասը:  
Այդ լայնածաւալ պետութիւնը իր համարեա 135 միլիօն ազգա-  
բնակչութեամբ սահմանակից է բազմաթիւ մեծ և փոքր, լուսա-  
ւոր և խաւար պետութիւնների, որոնց հետ նա մշտապէս քա-  
ղաքական և տնտեսական յարաբերութիւնների մէջ է: Ինչպե-  
տեալ հարեանների ներքին կեանքի փոփոխութիւնները ու-  
րոշ ազդեցութիւն պէտք է անեն Ռուսաստանի պետական և թէ  
ժողովրդական կեանքի վրայ, որովհետև բոլորովին անջատել ու  
կղզիացնել իրարից ազգերն անհնարին է. այդ չը կարողացան  
անել նոյնիսկ շինացիք, փակուելով իրանց հոշակաւոր պատե-  
րի յետը: Եւ այժմ այսօր նոյն Չինաստանի ներքին խռովու-  
թիւնները նորից ու նորից գալիս են մեզ ապացուցելու, որ մարդ-  
կային կեանքը երկրագնդի վրայ մի համատարած ովկիանոս է,  
որի մէջ անկարելի է սահմանափակել չարժումը որոշ վայրերում  
և արգելել, որ ծագած ալեկոծութիւնը չը տարածուի շուրջը և  
չը հասնի նոյնիսկ ամենահեռաւոր եզերքներին:

Այսպէս օրինակ, Մայրագոյն Արևելքում Բոունցամար-  
տերի յարուցած խռովութիւնը չարժման մէջ գցեց ոչ միայն  
Ասիան, այլ մասնաւանդ Եւրոպան և եանկիների հայրենիքը: Այդ  
բոլոր երկիրներն ստիպուած էին դուրս գալ իրանց նօրմալ վի-  
ճակից և զօրք տեղափոխել, պատերազմ մղել իրանց վտանգած

շահերը պաշտպանելու նպատակով: Նոյնը պէտք է անէր և Ռուսաստանը: Բնականաբար այդ արտակարգ և չը նախատեսուած հանգամանքների շնորհիւ երկրի ամբողջ ազգաբնակութիւնը պէտք է պատրաստ լինէր ոչ միայն իր տնտեսական ոյժերը լարել՝ պետական արտակարգ ծախքերը ծածկելու համար, այլ և պէտք է պատրաստ լինէր իր զաւակներէց շատերի արիւնը թափելու, կեանքը զոհելու:

Չինական այդ բարգուժիւնների հետեանք էին ամառուայ ամսում յայտարարած նաև այն կարգադրութիւնները, որոնցով աւելացուած է եւրոպական և չինական սահմանից մտնող ապրանքների վրայ մաքսը, արտասահմանեան անցաթղթերի գնաւրդի վրայ անուած է որոշ յաւելում, և զինու, սպիրտի, գարեջրի ու ծխախոտի ակցիզը բարձրացուած է:

Նոյն չինական գործերի շնորհիւ պէտք է յետաձգուէին և զանազան ներքին կարևոր վերանորոգութիւնների իրագործումը: Սյուպէս, օրինակ, թէև սկզբունքով արդէն վճռուած էր քաղաքներում բնակարաններից ստացուող հարկը յատկացնել քաղաքային ինքնավարութիւններին և դրա շնորհիւ քաղաքային գործերին մասնակից անել տնատէրերի հետ նաև բնակարանատէրերին, բայց յայտնի եղաւ, որ առայժմ յետաձգուած է և այդ որոշման իրագործումը: Նոյնպէս յետաձգուած են անորոշ ժամանակով նաև երգուեալների դատարանի ներմուծումը Սիբիրիացում և մի քանի այլ վերանորոգութիւններ: Երևի, մասամբ, այդ արտաքին հանգամանքների շնորհիւ անցեալ տարի մեծ ծաւալով չիրականացան լուսաւորութեան միջխտրութեան կողմից յարուցած այն հիմնական փոփոխութիւնները միջնակարգ դպրոցների ծրագրների և կազմակերպութեան մէջ, որ սրտատրուի սպասուած էր ամբողջ մասուլը միացած ազգաբնակութեան հետ: Օգոստոս ամսում լուս. միջխտրի յայտարարած շրջաբերականներից կարելի էր տեսնել, որ առայժմ մի քանի թեթև փոփոխութիւններով պէտք է սահմանափակուի վերանորոգութիւնը. այդպէս՝ հին լեզուներից դրաւոր աշխատութիւններն ու քերականամոլութիւնը մի քիչ կրճատուած են և վարչական գործերում շեշտուած է կօլլեգիալ սկզբունքի անշղջ գործադրութեան մասին. մինչև այժմ այդ սկզբունքը միւսած տառ էին դարձրել մանկավարժական և տնտեսական խորհուրդները և ամեն բան վճռում էր նախագահը (վերատեսուչը), իսկ միւս անդամները լոկ ձեւակախութիւն էին կատարում, ստորագրելով արդէն նախապատրաստուած որոշումները դասամիջոցներին:

Սակայն նոր ուսումնական տարուանից, այնուամենայնիւ՝ աւելանում են մի քանի նոր բարձրագոյն դպրոցներ. այսպէս՝

ամառս հիմք դրուեց Մոսկուայում կանանց գիւղատնտեսական կուրսերին. նորից թոյլատրուեց բանալ նոյն մայրաքաղաքում կանանց նախկին (Գերիէէի) բարձրագոյն կուրսերը, Օդեսսայում բացուում է համալսարանի նաև բժշկական բաժինը. Սիբիրի Տոմսկ քաղաքում հիմնուում է տեխնոլոգիական ինստիտուտ և Պետերբուրգում պէտք է բացուի մի պոլիտեխնիկում: Չը նայած այդ բոլոր նոր բարձրագոյն դպրոցների բացման, ուսման պահանջը այնքան մեծ է, որ բոլոր ցանկացողների համար տեղ չը կայ: Թէ ինչ մեծ մրցում կայ տեղերի համար, այդ ցոյց կը տան մի երկու թուեր: Պետերբուրգում լեռնային ինստիտուտի 70 ազատ տեղի համար 1244 ինդիրք էր ներկայացրած, իսկ տեխնոլոգիական ինստիտուտ 250 ազատ տեղի համար 1053 ցանկացողներ կային: Անկասկած բարձրագոյն կրթութեան դոճները աւելի մեծ դժուարութեամբ են բացուում րէալիստների և կահանց առաջ, քան կրասսիկների: Բէալիստները, չը նայած որ աւելի մեծ պատրաստութիւն ունեն համալսարանի բնագիտական, մաթեմատիկական և բժշկական բաժինների համար, քան կրասիկները, բայց զրկուած են համալսարան մտնելու իրաւունքից: Սակայն այդ հին կարգը, ինչպէս երևում է, վերանալու մօտ է, որովհետև, լուրերին նայած, ոչ միայն զինուորական մինիստրն է մտադիր հարց յարուցանել, որ րէալիստներին թոյլատրուի մտնել զինուորական-բժշկական ճեմարան, այլ լուսաւորութեան մինիստրութեան մէջ ևս քննուում է համալսարանի վերև յիշած բաժինների մէջ րէալիստներին ընդունելու հարցը:

Սոսերով Ժողովրդի լուսաւորութեան խնդրի մասին, չէ կարելի մատնանիչ չանել զինուորական մինիստրի այն կարգադրութեան վրայ, որով մեծ զարկ է տրուում գրագիտութեան տարածման մասսայի մէջ. այսուհետև պարտադիր է դառնում կարգալ-գրելու ուսուցումը անգրագէտ նորակոչներին, որոնց թիւը իւրաքանչիւր տարի մօտ 200 հազար է լինում:

Ժողովրդի կեանքի համար մեծ նշանակութիւն ունեն ամառուայ ամիսներում հրատարակուած նաև օրէնսդրական այն կարգադրութիւնները, որոնցով փոխուում է աքսորը՝ Սիբիր և Անգրկովկաս: Քաղաքական յանցաւորների աքսորը մնում է, իսկ դատարանի և մեչչան ու զիւղական հասարակութիւնների որոշմամբ կայացած աքսորները փոփոխութեան են ենթարկուում:

Դատարանի որոշմամբ աքսորը փոխարինուում է բանտարկութեամբ կամ կարանաւորներին՝ ուղղիչ բաժիններին յանձնելով: Այսուհետև օրէնքը զրկում է մեչչան հասարակութիւնները իրաւունքից—հեռացնել իրանց միջից չը ցանկացած ան-

դամներին, իսկ գիւղական հասարակութիւնների նոյն իրաւունքը միայն սահմանափակուած է:

Գիւղական հասարակութեան վրայ այժմ պարտք է դրուում նախ՝ ճիշտ որոշել թէ ինչ հիման վրայ է հասարակութիւնից հետացուող սնդամը վտանգաւոր համարուած, երկրորդ՝ այդ որոշումը կայացրած համարել միայն ձայների  $\frac{2}{3}$ -ով և երրորդ՝ աքսորման ծախքը գցել համայնքի վրայ: Անկասկած այդպիսով գիւղական համայնքը ստիպուած կը լինի աւելի չըջահայեաց լինել և վրէժխնդրութիւնից դրդուած կամ զօրեղ անհատների ճնշման տակ, չը գրկել իրաւունքներից իրանց՝ չատ անգամ անմեղ անդամներին:

Բացի յիշած օրէնսդրական կարգադրութիւններից, որոնք ունեն ամբողջ տէրութեան համար նշանակութիւն, տարուայ ընթացքում հրատարակուեցին և մի քանի որոշումներ, որոնք վերաբերում էին ծայրերին՝ Ֆինլադիային, Լեհաստանին և Կովկասին: Այս վերջինի նկատմամբ յիշե՛ք այն կարգադրութիւնը, որով շնչահարկի փոխարէն մտցնուած է տուրքը հողերից, հասոյթաւորութեան համեմատ, և այդպիսով թելթեանում է չքաւոր դասի բեռը, որի մի մասը բարդուած է խոշոր կալուածատէրերի վրայ: Բայց որպէսզի դիւրացնուի ազնուականների համար հարկատուութեան նոր եղանակը, բարձրագոյն հրամայուած է ազատել թիֆլիսի և Քութայիսի նահանգների տոհմային ազնուականութիւնը 1901—1903 տարիների ընթացքում պետական հողային հարկից:

Անցած ամառուայ ընթացքում որոշած է մտցնել պետական հարկ բնակարաններից և Կովկասում. մի կարգ, որ գոյութիւն ունի ներքին Ռուսաստանում 1894 թուից:

Պետութեան ծայրերի մասին խօսելիս ի դէպ է օգտուել առիթից մի քանի խօսք ասելու համար այն բանակուտի մասին, որ երկար ժամանակ վարում էին ուս թերթերից մի քանիսը, ցանկալով ապացուցել, որ կենդրոնական նահանգների ազգաբնակութիւնը ուժասպառ է լինում, հնորհիւ ծայրերի, որոնց ազգաբնակութիւնը, իբրև թէ, աւելի քիչ հարկ է վճարում, քան կենդրոնի բուն ուս ժողովուրդը: Սակայն ուսաց ամենալուրջ և անաչառ թերթը՝ («Русск. Вѣд.») ապացուցեց որ, եթէ մի կողմ թողնենք այդ խնդրի ազգայնական—քաղաքական կողմը և բաւականանանք միայն հարցի անտեսական կողմի քննութեամբ, կը տեսնենք որ կենդրոնի ուժասպառման պատճառները բոլորովին այլ են, քան ինչ որ առաջ են բերում ուս պահպանողականները:

Նախ՝ կենդրոնի գիւղացիք չքաւոր են հէնց այն պատճառով,

որ ճորտութեան վերացման ժամանակ նրանք շատ մանր հողաբաժիններ ստացան. ուրեմն տիրում է գիւղացիների սակաւահողութիւն. մի երևոյթ, որ, կ'աւելացնենք մենք, տեղի ունի և Կովկասում. իսկ երկրորդ՝ ծայրերում հարկային բեռը աւելի թեթեւ չէ, քան կենդրոնում. իսկ եթէ ծայրի մի բնակչի վրայ, օրինակ Կովկասում, աւելի քիչ է հարկ ընկնում, քան կենդրոնում, այդ բացատրում է նրանով, որ գոյքերի հասոյթները և արգինաբերութիւնը կենդրոնական նահանգներում աւելի բարձր են, քան ծայրերում, ուր թէ գոյքն է սակաւարժէք, թէ արգինագործութիւնն ու առևտուրն են թոյլ զարգացած: Ուրեմն, աւելի մեծ գումար է գոյանում եկամտաներից կենդրոնում, քան ծայրերում: Այդ գումարները բաժանելով ազգաբնակչութեան թուի վրայ, ստացւում են միջին թուեր, որոնք միայն ցոյց են տալիս արգինագործութեան և վաճառականութեան առաւել կամ պակաս ծաղկման աստիճանները:

Եթէ կենդրոնական նահանգներում մի բնակչի վրայ ուղղակի հարկ ընկնում է 1 ու.84 կ., իսկ Կովկասում 71 կոպ., դա միայն ցոյց է տալիս որ գոյքերի զինն ու հասոյթաւորութիւնը, որոնք ենթակայ են հարկին, այդ չըջանում աւելի մեծ յարաբերութեան մէջ են բնակիչների թուի հետ, քան Կովկասում: Այդպէս, օրինակ, և՛ Լեհաստանը, և՛ Կովկասը ունեն ազգաբնակչութեան համարեա նոյն թիւը. առաջինը 9,4 միլ. բնակիչ, իսկ երկրորդը՝ 9,7 միլիօն: Մինչդեռ եկամտային հարկերը Լեհաստանում կազմում են 13 միլ. 130 հազար ու., իսկ Կովկասում միայն 7 միլ. 287 հազար ու.: Բթամիան էլ կը հասկանայ, որ այդ հանգամանքի շնորհիւ հարկի միջին թիւը աւելի բարձր կը դուրս գայ Լեհաստանում, քան Կովկասում: Բայց դրանից բնաւ չէ հետևում որ հարկի ծանրութիւնը լեհական նահանգներում աւելի է քան Կովկասում: Այդ ցոյց է տալիս միայն այն, որ Լեհաստանում հարկին ենթակայ առարկաները աւելի արժէքաւոր են քան Կովկասում: Մի օրինակ ևս բերենք:

Պետական կօնտրօլի վերջին հաշուետւութեան համեմատ, 1898 թ. անշարժ կայքերից հողային հարկերը և առևտրի, արգինագործական զանազան զբաղմունքների ու դրամագլխի վրայ դրած տուրքերը Ռուսաստանի կենդրոնական նահանգներում տուին 13,9 միլ. ռուբլի, որ միջին թուով մի բնակչի վրայ ընկնում է 1 ու. 70 կոպ., մինչդեռ հիւսիսային երկու նահանգներում (Արխանգելսկի և Վոլոգդայի) նոյն տուրքերը տուին ընդամենը 415,4 հազար ռուբլի. կամ, այլ խօսքով, այդ նահանգների ազգաբնակչի մի շնչի վրայ ընկնում էր 25 կոպէկ: Սակայն չը պէտք է դրանից եզրակացնել, թէ հարկը

աւելի մեծ էր կենդրոնական նահանգներում, քան հիւսիսում, այլ միայն պէտք է հասկանալ որ հարկատուութեան նմախալայ առարկաները աւելի արժէքաւոր են կենդրոնական նահանգներում, քան հիւսիսայիններում:

Որպէսզի թէ ծայրերը և թէ հիւսիսը կարողանան նոյնչափ ընդունակ դառնալ հարկատուութեան, պէտք է աշխատել, որ արդիւնագործական և առևտրական ոյժերն էլ այդ տեղերում նոյնքան զարգանան, որքան կենդրոնական նահանգներում:

Այժմ թէ կենդրոնի և թէ ծայրերի նահանգներում հարկերի գլխաւոր ծանրութիւնը ընկնում է ոչ այն դասակարգերի վրայ, որոնք աւելի ընդունակ են տանել այդ բեռը, այլ՝ աշխատող և չքաւոր մասսայի: Թեթեւացնել դրանց դրութիւնը, առանց կրօնի և ցեղի խտրութեան, ահա այդ կը լինի արդարութեան պահանջը:

Եւ, իսկպպէս, մինչև այժմ ոչ միայն հարկերի բեռն է տանում մասսան, այլ նա ամենից շատ է զոհարելութիւններ անում «հայրենի արդիւնագործութեան» զարգացման համար:

Մաքսային հովանաւորութիւնը և վերջին տարիների ընթացքում շինուած երկաթուղային գծերի ահագին ցանցը մեծ զարկ տուին ամբողջ Ռուսաստանի արդիւնագործութեան բոլոր ճիւղերի արագ զարգացման: Մաքսը օգնեց մեր արդիւնագործներին ոտի վրայ կանգնել, առանց ճնշուելու արտաքին մրցումից: Եւ ահա մեր արդիւնագործները իրանց զգալով բուրսովին ապահով արտաքին մրցումից, ոտի կանգնելուց յետոյ էլ չէին աշխատում ոչ տեխնիկական մեծ կատարելագործութիւնների, ոչ էլ արդիւնքների էփանացման մասին: Ընդհակառակը՝ չափազանց մեծ ախորժակներ էին ցոյց տալիս սպառող մեծամասնութեան գրպանները հարստահարելու «քրիստոնէավայել» գործում: Սպառող մասսան, ուղէ չուզէ, պէտք է իր կենցաղի անհրաժեշտ բոլոր իրերը գնի մեր արդիւնագործներից, որոնք միմեանց խօսք տալով արդիւնքների վրայ չափազանց բարձր գներ են պահպանում: Այդ անօրմալ դրութեան շնորհիւ մի կտոր չթի համար սպառողը վճարում է կրկնակի և մի փութ չաքարի համար հինգ անգամ աւելի, քան նա կը տար, եթէ արտասահմանի ապրանքների վրայ մաքս դրուած չը լինէր: Նոյնը տեղի է ունենում թէ նաւթ, թէ քարածուխ, թէ երկաթ, թէ թուղթ և թէ այլ ապրանքներ գնելիս:

Իսկ երբ մեր արդիւնագործները ժողովում են, անպատճառ նախ և առաջ այդ մաքսերի անվերջ աւելացման կամ անտասան պահպանելու խնդիրն են մտնում: Ասե՛քք տարօրինակ էլ կը լինէ՛ր՝ վաճառականից կամ արդիւնագործից պահանջել, որ հետամուտ չը լինեն իրանց շահերին և «անաչառութեան», կամ՝ «ար-

դարութեան» մասին խօսէին, կամ թէ ի նկատի ունենային նաև սպառողների ու բանուորների պահանջները: Միամտութիւն է արտրուիզմը հաշտեցնել առևտուրի հետ... Գոյութեան կուռի ներկայ պայմանները մինչև չը փոխուեն, գայլը չի թողնիլ դառան համեղ միսը... Եւ ինչո՞ւ մեղադրենք միայն արդիւնադործների և առևտրականների դասակարգերը, քանի որ ինժեներն էլ, փաստաբանն էլ բարոյականութեան մասին բոլորովին նոյն չափերը ունեն. «Ինքդ կ'ըլ տուր, եթէ չես ուզում որ քեզ կուլ տան», ահա ժամանակակից էթիկան և գոյութեան կուռի նշանաբանը...

Իսկ լոկ պօլիցիական—վարչական միջոցներով չի էլ կարելի ստիպել մեր արդիւնագործներին, որ բաւականանան համեստ շահերով: Օրինակ, Վարչավայում անցեալ ձմեռ 17 խոշոր շահադէտներ (սպեկուլանտ) կազմել էին մի ընկերակցութիւն և սոսկալի կերպով բարձրացնում էին քաղաքում քարածուխի գները: Նահանգապետը հրամայեց, որ ոչ ոք իրաւունք չունենայ որոշած գների բարձր ծախել ածուխը, հակառակ դէպքում պատիժ էր սպառնում: Եւ ինչ դուրս եկաւ. մեր ճարպիկ շահադէտները դադարեցրին քարածուխի առևտուրը Վարչավայում, իրանց սպրանքները դուրս տարան և ուրիշ քաղաքներում նոյնքան թանգ գնով վաճառեցին... Իայց բոլորովին այլ ազդեցութիւն ունեցաւ, երբ կառավարութիւնը թոյլ տուեց երկաթուղիներին և մի քանի ծովափնեայ քաղաքներին—առանց մաքսի անգլիական ածուխ գնել: Իսկոյն, այդ կարգադրութիւնից յետոյ, մեր շահադէտների ճարպիկութեամբ արուեստական ձեով բարձրացած գներն ընկան: Ուրեմն, երբ արդիւնագործութիւնը ռաի է կանգնում այնքան, որ կարող է առանց չափազանց հովանաւորութեան մրցել, բայց փոխարէնը սկսում է ի չար գործ գնել հովանաւորող մաքսը, և արուեստապէս բարձրացնել գներն ու հարստահարել սպառողներին—այն ժամանակ մաքսի գոնէ ժամանակաւոր վերացումով կարելի է սառը ջուր ածել շահադէտների տաքացած կատարների վրայ և նօրմալ դրութեան բերել նրանց... Այլապէս ինչ կարող են անել խոշոր արդիւնագործների գաղտնի պինդիկատների դէմ մեր չը կազմակերպուած սպառողները կամ բանուորները: Չը պէտք է մոռանալ, որ մեղ մօտ զանազան ճիւղերի արդիւնագործները ունեն կանոնաւոր ժողովներ և կազմակերպութիւններ, որոնց չնորհիւ միշտ իրանց շահերն ապահովում են: Եւ ինչքան խոշոր է արդիւնագործը, այնքան անխոցելի է նա:

Հէնց վերջերումս տեղի ունեցան կովկասում մետաքսագործների և նաւթագործների ժողով, որոնք բնականա-

բար զբաղուած էին իրանց դասակարգային շահերն ամբասնելու խնդիրներով: Իսկ աշխատող դասակարգի և սպառողների յարաբերութիւնների մասին ամենաթեթեւ ակնարկներ միայն կարելի էր լսել: Եթէ հետեւէք նաւթագործների ժողովների նիստերին, կը նկատէք, որ նաւթային թագաւորների երկու ձեռներն էլ լի են գնդակների կոյտերով. այդ կոյտերով միշտ խեղդուում են անհաճոյ բողոքների ծվծվոցները: Ընչ քուէարկութիւն կարող է լինել այդ պայմաններում, երբ մէկը ունի 300 ձայն, իսկ միւսը 1 ձայն:

Իայց թողնենք այդ ժողովները առանձին նկարագրութեան և դասակարգային շահերի աշխարհից դառնանք դէպի ընդհանուր հասարակական:

Անհունութեան մէջ գլորուած դարի վերջին տարին աղետաբեր էր Անդրկովկասի մի ամբողջ գաւառի—Ախալքալաքի համար: Ամեն ցեղերից և ազգաբնակչութեան բոլոր խաւերից տառապեալներին ցոյց տուած օգնութիւնը միսիթարական երեսիթ էր ընդհանուր հայրենիքի բոլոր գաւակների մէջ եղած սերտ կապակցութեան: Այդ կապը երևաց և այն համակրական ցոյցերի ժամանակ, որ առանց ցեղի և կրօնի խտրութեան արտայայտուեց Ռուսաստանի հեռաւոր անկիւններից թէ Սենկեիշի և թէ Միխայլովսկու յօբելեանի առիթով: Այդ կապը ապացուցուեց և՛ Այվազովսկու ու Ջանշեանի մահով: Մէկը իր դիւթիչ վրձինով, իսկ միւսը իր ազնիւ գրչով եկան ապացուցելու չարամիտ մարդկանց, որ ռուսահայը ընդունակ է իր նոր հայրենիքին ոչ միայն պետական անձինք և քաջ զօրավարներ տալ, այլ և ոյժ ունի դուրս բերել իր միջից այդ հայրենիքի փառքին և առաջադիմութեան նուիրուած աշխարհահռչակ գեղարուեստագէտ և ազնիւ գրչի տաղանդաւոր ներկայացուցիչ: Թէև աւելի նեղ էր երրորդ հայի՝ Ստեփանէի գործունէութեան ասպարէզը, սակայն այդ գործին էլ իր բոցավառ քարոզներով և կենդանի գրչով օգնել է պետութեան բազմակեզու տարրերից մէկի՝ հայի՝ մտաւոր բարոյական մակերևոյթի բարձրացման: Նա իր գործունէութեամբ փարատում էր խաւարը, մտրակում կուշտ եսամոլութիւնը և այդպիսով նպաստում ընդհանուր առաջադիմութեան գործին: Այդ է պատճառը, որ Ստեփանէի մահը զգալի էր ոչ միայն հայ ժողովրդի համար, այլ աննկատելի չանցաւ նաև ռուսաց լուսագոյն մամուլի համար: Մեր հոգևորականութեան այդ արժանաւոր ներկայացուցիչ մահուան առիթով չէ կարելի չը յիշել այն մի քանի կարգադրութիւնների մասին, որոնց չնորհիւ մեր հոգևոր իշխանութիւնը, մասնաւանդ այս վերջին 6 տարիների ընթացքում, բացել

է մի մեծ վիճ իր և ժողովրդի մէջ, ամեն քայլափոխում ոտնակոխ անելով նրա իրաւունքները: Այդպէս մօտ 80 տարի գոյութիւն ունեցող Ներսիսեան դպրոցի հոգաբարձական իրաւունքները մի գրչի հարուածով, առանց բնաւ տեղիք տուած լինելու, փոփոխուեցին: Զօրեղացաւ նրա մէջ կղերական տարրը, որ միշտ և ամենուրեք միայն խաւարի և անկարգութեան նեցուկ է եղել: Այդ ընդհանուր կղերական հոսանքի արտայայտիչներէց մէկն էլ այն խաղերն են, որ թոյլ են տալիս անել կոնսիստորիաները մեր ծուխերի հետ: Իբրև նմուշ կոնսիստորիական կամայականութիւնների, մենք առաջ կը բերենք նրա բռնած ընթացքը Թիֆլիսի եկեղեցիների ծուխերէց մէկի դէմ:

Անցած տարուայ դեկտեմբերի 3-ին կայացաւ Քամոյենց ս. Գէորգ եկեղեցու ծխականների ընդհանուր ժողով եկեղեցու երէցփոխ պ. Վարդապետեանի հրաւերով, նոյն եկեղեցու սենեակում: Ներկայ էին 51 ծխականներ, ծխականների ժողովի խորհրդածութեան առարկան էր, ի միջի ալլոց, ծխի և վիճ. Կոնսիստորիայի մէջ ծագած տարաձայնութիւնների խնդիրը: Մեր հասարակութեան ինքնաճանաչութեան տեսակէտից և մեր հոգեւոր իշխանութեան մէջ տիրող անկարգութիւնները բնորոշելու նպատակով աւելորդ չենք համարում առաջ բերել ժողովի շօշափած մի քանի հարցերը, օգտուելով արձանագրութիւնից:

Երէցփոխը յայտնեց, որ վիճ. Կոնսիստորիայից ստացել է նույնաբերի 7-ից մի հրաման, № 5336, որով վիճ. Ստեանը անվաւեր է համարում ներկայ տարուայ ապրիլի 23-ին և 30-ին կայացած ծխականների ընդհանուր ժողովները, որովհետեւ՝ 1) ժողովներին որպէս թէ ծխականների օրինական թիւ ներկայ չէ եղել, ծխականների ընդհանուր թիւը ընդունելով ո՛չ 232, այլ 246: 2) վիճ. Կոնսիստորիայից նարխապէս թույլտուութիւն չէ ստացուել ծխ. ժողով հրաւիրելու: 3) ժողովի նպատակը նրան չէ յայտնուած: 4) նախագահը Կոնսիստորիայից չէ նշանակուած եղել, և 5) արձանագրութիւնները չեն կրում ծխականների ստորագրութիւնները, այլ վաւերացրած են միայն նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ:

Բայց դորձերից երևում է, որ ապրիլի 23-ին կայացած ժողովում ներկայ են եղել երէցփոխի հետ՝ 48 հոգի: Եկեղեցու երկու միաբան քահանաների առաջարկած ծխականների ցուցակների համաձայն նոյն եկեղեցու ընտրող ծխականների թիւը այն ժամանակ եղել է 232 հոգի և ոչ 246, հետևաբար 48 թիւը օրինատը է, իբրև ՚յ-ից առաւել՝ նիստը բաց անելու համար: Իսկ ապրիլի 30-ի ժողովը շարունակութիւն էր նախընթաց նիստի, ուր ո՛չ մի նոր առաջադրութիւն կամ խնդիր չէ քննուած, ինչպէս ապացուցուած է նոյն ժողովների արձանագրութիւններով: Ուստի՝ այս դէպքում, ժողովականների թիւը, որ եղել է 30, վճռողական նշանակութիւն չունի: Եթէ մինչև անգամ ծխականների ընդհանուր թիւը ընդունենք փոխանակ 232-ի 246, ինչպէս յայտնում է վիճ. Ստեանը, այնուամենայնիւ 48 թիւը օրինական էր նիստը բաց անելու համար, որովհետեւ ըստ վկայութեան երկու միաբան քահանաների, այն ժամանակ քաղաքից բացակայում էին 32 ծխականներ, իսկ ընդհանուր կարգով ընդունուած է՝

քաղաքից բացակայողներին ընդհանուր թուից հանելուց լիսոյ 1/3 մասը որոշել:

Վիճակ. Կոնստանտնուպոլի կարծիքով եկեղեցու երէցփոխը ինքնուրոյն չէ կարող ծխականների ժողով հրաւիրել, այլ պարտական է նախօրօք թոյլտուութիւն խնդրել վիճ. Կոնստանտնուպոլից, լայտնելով նրան զումարուելիք ժողովի նպատակը, որի թոյլտուութիւնը տալով, Կոնստանտնուպոլի կողմից նշանակում է և նախագահ նիստը կառավարելու համար ներկայ ժողովը հորեոր իշխանութեան ալս կարծիքը գտնում է անհիմն և հակառակ մեր եկեղեցու ժողովրդական ոգուն և տիրող օրէնքին:

Համաձայն մեր եկեղեցու բուն ասանդութեան, եկեղեցու հիմքը համարում է ինքը—ժողովուրդը. նա է ընտրում իր եկեղեցու բոլոր սպասաւորներին և պաշտօնեաներին, սկսած ժամակոչից մինչև Ծայրագոյն Հայրապետը. ըստ այսմ գծագրուած է և 1836 թ. այն օրէնսդրութիւնը, որ Պօլսօժէնիա է անուանում և վերաբերում է մեր եկեղեցու ներքին կառավարութեանը. Նոյն օրէնսդրութեան մէջ կայ ասանձին գլուխ, որ որոշուած են վիճ. Կոնստանտնուպոլի, երէցփոխի և ծխի իրաստութեան սահմանները. Համաձայն 1896 թուի հրատարակած օրէնքի XI հատորի, I մասի 1229 յօդուածի, հսկողութիւնը եկեղեցական կայքերի պահպանութեան վրայ, եկեղեցու եկամտոնների կառավարութիւնը, շինութիւն անելը, շինութիւնների կարկատելը, նրանց վարձով տալը, եկեղեցու գործերին վերաբերեալ փաստարանութիւնը պատշաճաւոր դիւանատներում և այլ դրանց նման գործողութիւնները—կազմում են երէցփոխի պարտաւորութիւնները. Նա առհասարակ գործում է իբրև ծուխի հասարակատար. իսկ կարևոր գործերի համար նա իրատունք ունի պահանջել ծուխից ասանձին հաւատարմագիր, որ ընդունելով, այդպիսի գործերի վերաբերութեամբ ազատ է մնում պատասխանատուութիւնից ծուխի առաջ:

Իսկ 1232 յօդուածի համաձայն՝ երէցփոխը իւրաքանչիւր տարին անցնելուց լիսոյ պարտաւոր է տալ ծխականների ժողովին լիակատար հաշիւ իր բոլոր գործողութիւնների մասին եկեղեցու տնտեսական գործերի վերաբերմամբ, և մանաւանդ նրա դրամարկղի վիճակի մասին: Այդ հաշիւը լիսոյ նա առաջարկում է Կոնստանտնուպոլի:

Նոյն օրէնսդրութեան համաձայն եկեղեցական կայքերի կառավարութեան վրայ ընդհանուր հսկողութիւնը պատկանում է Եջմիածնի Սինոդին, իսկ ամեն մի թեմում՝ վիճակային Կոնստանտնուպոլից, բայց երէցփոխին է պատկանում եկեղեցու կայքի և գոյքի անմիջական կառավարութիւնը, որ և այդ դէպքում գործում է իբրև ծուխի հաւատարմատար:

Արդ՝ ի նկատի առնելով բոլոր վերոյիշեալ կէտերը, ծխական ընդհանուր ժողովը գտնում է. 1) երէցփոխի իրատունքը և պարտականութիւնն է եկեղեցու տնտեսութեան և կառավարութեան վերաբերեալ գործերի համար ինքնուրոյն հրաւիրել ժողովներ, առանց նախապէս թոյլտուութիւն խնդրելու վիճ. Կոնստանտնուպոլից. 2) Հետևապէս և իրէցփոխին է ժողովներում քննուելիք խնդիրների որոշողը. 3) Ծուխի իրատունքն է, իբրև օրէնքով ընդունուած որոշ համազումար ժողովի, իր միջից ընտրել նախագահ՝ նիստը կառավարելու համար, իսկ հոգեւոր իշխանութիւնը կարող է, եթէ կամենայ, իր ներկայացուցիչն ունենալ ժողովում, առանց իրական մասնակցութեան և ձայնի, և ո՛չ որպէս ժողովի նախագահ ասանձին հրահանգներով, որ ո՛չ նախատեսուած է օրէնքով և ո՛չ բողոքում է եկեղեցու ասանդութիւններից. 4) երէցփոխին իրատունք չունի,

առանց ծուխի հաճութիւնն ստանալու, կատարել հողերը իշխանութեան՝ նիւթականի վերաբերեալ պահանջները, ուստի, վիճ. Կոնսիտորիան, այս կամ այն կարևոր դէպքում, պէտք է երէցփոխի միջոցով դիմէ ծխական ժողովին, որ և տնօրինում է արժանը Սլապէս վարունց և Վեհափառ Կաթողիկոսը, առաջադրելով ծուխի արբեհանութեանը ուսանող Նալբանդեանի ուսման վճարի տուչութիւնը, Սխալբալաքի տառապեալներին և եկեղեցոս միաբան Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանցին բժշկութեան նպաստ տալու խնդիրները: Սլապէս վարում է և Սինօզը: Ուրեմն՝ թէ՛ օրէնքը, թէ՛ Վեհափառ Կաթողիկոսը և թէ՛ Սինօզը ընդունում են ծխական ժողովի իրաւունքը, մինչդեռ Կոնսիտորիան, իր վրայ վերցնելով Սենատի իրաւասութիւնը՝ բացատրել օրէնքը—բացատրում է բոլորովին քմահաճ կերպով և հակառակ Ծայրագոյն Ղշխանութեան կարգադրութեան: Ծխական ժողովը չէ ընդունում վիճ. Կոնսիտորիալի այդ իրաւասութիւնը, այսինքն՝ ինքնակամ բացատրել օրէնքները (Ն. 5) ապրիլի 23-ի արձանագրութիւնը վաւերացրել է չաջորդ՝ 30-ին կալցացած ժողովը (որ և երևում է ժողովի արձանագրութիւնից) և ապա՝ նոյն ժողովի հասնութեամբ ստորագրել են միայն նախագահը և քարտուղարը, որպիսի կարգը ընդունում է նոյնպէս այլ և այլ հասարակական հաստատութիւնները մէջը, իսկ 30-ի արձանագրութիւնը այն նիստուհի կարգացուցուց լետոյ ժողովը հաստատեց, առանց որ և է առարկութեան: Ուստի՝ վիճակային Կոնսիտորիալի առարկութիւնը՝ թէ՛ վերոյիշեալ արձանագրութիւնները, կրելով միայն նախագահի ստորագրութիւնը՝ անվաւեր են,—ժողովը համարում է նոյնպէս անիմն:

Նոյն թղթում վիճ. Կոնսիտորիան նախատում է երէցփոխին, որ սա չը պէտք է հրաւիրէր ծխականների ժողով նախկին երէցփոխ Զալալեանցի վատնած եկեղեցական գումարի խնդրի առիթով, այլ պէտք է ինքնուրոյն վարուէր, կամ Կոնսիտորիալի տնօրէնութեանն ապաւինէր: Զարմանք է չարցանում Կոնսիտորիալի վարմունքը, քանի որ նրան քաջ չաչանի պիտի լինէր, որ օրէնքի տրամադրութեամբ երէցփոխի պարտականութիւնն էր անմիջապէս ժողով հրաւիրել և ծուխին ղեկուցանել եկեղեցու տնտեսական շահերին հասցրած վնասի մասին:

Ապրիլի 23-ի ժողովում ծուխը լսեց Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանցի խնդիրը, յանուն Վեհափառ Կաթողիկոսի, որով նա խնդրում էր օժանդակութիւն բժշկութեան համար: Նորին Օծութիւնը բարեհաճել էր մակադրել. «Յանձնեմք երէցփոխի Ս. Գէորգ եկեղեցոյ կարգադրել համաձայնութեամբ ծխականաց լաղազ օգնելոյ քահանայիս» ֆողովը հպատակուելով Նորին Վեհափառութեան բարեհաճութեանը և չարգելով միանգամայն իր եկեղեցու միաբան քահանայի խնդիրը, որոշեց տալ նպաստ բժշկութեան համար 300 ու. Սլապէսը ևս առիթ տուեց Կոնսիտորիալին նախատելու երէցփոխին, որ նա նախապէս այդ խնդրի առիթով չէ դիմել Կոնսիտորիալին, ապա հարցնում է, թէ՛ թի՞նչ արտաքոյ կարգի և արդիւնատր ծառայութեան համար ծուխը վարձատրում է այդ պաշտօնեալին» և վերջացնում է դատապարտելով երէցփոխի գործողութիւնը, առաջադրելով նրան միանգամայն ձվաբերել իր սեփական միջոցներից Վեհափառ Կաթողիկոսի հաճութեամբ և ծուխի որոշմամբ տուած նպաստը:

Կոնսիտորիալի բռնած ընթացքը այս խնդրի վերաբերութեամբ ժողովը գտաւ միանգամայն ապօրինի և եկեղեցական դիւցիպլինայի հակառակ: Եւ որովհետեւ ապրիլի 29-ի արձանագրութիւնը իր ամբողջութեամբ

ծխական ժողովից վաւերացրած է, ուստի Կոնսիստորիայի առաջադրութիւնը՝ 300 ոււրլու վերադարձի մասին երէցփոխի սեփականութիւնից, ժողովը գտնում է անարդար:

Այսպէս է ահա Կոնսիստորիան յարգում մեր ծխականների իրաւունքները: Եւ ցաւալին այն է, որ Կոնսիստորիայի տարօրինակ հրամանագրերից շատերը ստորագրել է Բագրատ վ. Թաւաքալեանը...

Լ. Ս.

### ԵՐ Է Յ Փ Ո Ւ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ը

Վերջին տասը տարուան ընթացքում Թիֆլիսի ս. Գէորգ (Քամոյեան) եկեղեցին 4 երէցփոխ է ունեցել, իսկ նրանց հետ տեղույս հայոց վիճակային ատեանը տարօրինակ պաշտօնական յարաբերութիւնների մէջ է գտնուել. մինչդեռ մէկի վերաբերութեամբ նա եղել է մեղմ, ներողամիտ և բարեգութ մինչ ցօրինազանցութիւն ի պաշտօնէ, միւսի դէմ վիրաւորական և թըշնամական ցասումով լի պաշտօնական թղթեր է ուղղել, միայն ձգտելով ժողովրդական պաշտօնեայի սիրտը դառնացնելու և նրա հրաժարականը յաջողեցնելու նպատակին... Բայց թող չը կարծէ ընթերցողը, որ հոգևոր ատեանի այդ տարբեր վարմունքըն առաջ է եկել երէցփոխական պաշտօնավարութեան մէջ նկատուած դրական կամ բացասական կողմերի շնորհիւ: Բնաւ ոչ. միայն երէցփոխի անձն է եղել Կոնսիստորիայի տրամադրութեան բարոմետրը. եթէ երէցփոխը սիրելի է Կոնսիստորիային իր հնազանդութեամբ և այլ միայն հոգևոր ատեանի անդամներին յայտնի յատկութիւններով, նա այդ հաստատութեան persona grata-ն է. նրանց մէջ հաստատուած բարեկամական կապը այն զօրութիւնն ունի, որ երկու կողմն էլ իսկոյն մոռացութեան են տալիս իրանց պարտաւորութիւնը օրէնքի և հասարակութեան առաջ: Եւ ահա մենք տեսնում ենք, որ տարիների ընթացքում՝ հակառակ օրենքի դրական պահանջին ոչ երէցփոխն է տալիս տարեկան հաշիւ ծուխին, ոչ էլ Կոնսիստորիան է ստուգում իւրաքանչիւր ամիս երէցփոխի մատեանները. իսկ այդ փոխադարձ օրինազանցութեան անմիջական հետևանքը միշտ եղել է եկեղեցական-հասարակական գումարների վատնումը և կորուստը: Բայց բոլորովին այլ կերպ է վարուում վիճակային ատեանը այն երէցփոխի հետ, որ չէ հնազանդուում Կոնսիստորիայի՝ օրէնքով չը նախատեսուած պահանջներին, օրինապահ է և անկախ իր գործողութիւնների մէջ, որքան այդ թույլ է տրուում նրան, իբրև ծուխի հաւատարմատարին. այդպիսի երէցփոխի դէմ Կոնսիստորիան պատերազմական արշաւանք